

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
2000 թվականի մարտի 24-ին

ԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սիգարների, սիգարելաների և սիգարետների (այսուհետ՝ ծխախոտի արտադրանք) համար ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և մաքսատուրքի, և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար՝ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաստատագրված վճարները, դրանց հաշվարկման և վճարման կարգը:

2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետությունում ծխախոտի արտադրանք արտադրող-իրացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող ծխախոտի արտադրանքի վրա:

Հոդված 2. Հաստատագրված վճար վճարողները

1. Սույն օրենքի իմաստով հաստատագրված վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետություն ծխախոտի արտադրանք ներմուծող և հանրապետությունում ծխախոտի արտադրանք արտադրող ֆիզիկական և իրավաբանական անձինք (այսուհետ՝ վճարողներ):

2. Ծխախոտի արտադրանք ներմուծող քաղաքացիները վճարող են համարվում 400 հատ սիգարետը կամ սիգարելան և 10 հատ սիգարը գերազանցող մասի համար:

Հոդված 3. Հաստատագրված վճարների չափը

1. Վճարողները, տնտեսական գործունեության արդյունքներից անկախ, հաստատագրված վճարը հաշվարկում և վճարում են հետևյալ չափերով՝

«Ապրանքի ծածկագիրը ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի»	Ապրանքի անվանումը	Հաստատագրված վճարի չափը (դրամ 1000 հատի համար)					
		2011 թվականի համար		2012 թվականի համար		2013 թվականի համար	
		Ներմուծվող արտադրանքի համար	Ներքին արտադրության ապրանքի համար	Ներմուծվող արտադրանքի համար	Ներքին արտադրության ապրանքի համար	Ներմուծվող արտադրանքի համար	Ներքին արտադրության ապրանքի համար
2402 10 000 11	սիգարներ՝ ծխախոտ պարունակող	550000	300000	550000	300000	550000	300000
2402 90 000 11	սիգարներ՝ այլ						
2402 10 000 12	սիգարելաներ՝ ծխախոտ պարունակող	15000	11000	15000	11000	15000	11000
2402 90 000 12	սիգարելաներ՝ այլ						
2402 20 900 11	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող, ֆիլտրով	7000	5500	7500	6250	8000	7000
2402 20 100 11	սիգարետներ՝ մեխակ պարունակող, ֆիլտրով						

2402 90 000 13	սիզարետներ՝ այլ, ֆիլտրով						
2402 20 900 12	սիզարետներ՝ ծխախոտ պարունակող, առանց ֆիլտրի						
2402 20 100 12	սիզարետներ՝ մեխակ պարունակող, առանց ֆիլտրի	3250	1950	3250	1950	3250	1950»:
2402 90 000 14	սիզարետներ՝ այլ, առանց ֆիլտրի						

(Աղյուսակը փոփ. 14.12.01 ՀՕ-279, խմբ. 05.05.05 ՀՕ-87-Ն, փոփ. 25.05.06 ՀՕ-81-Ն, 26.12.08 ՀՕ-254-Ն, խմբ. 07.10.10 ՀՕ-127-Ն)

2. (մասն ուժը կորցրել է 28.11.11 ՀՕ-279-Ն)

3. (մասն ուժը կորցրել է 28.11.11 ՀՕ-279-Ն)

(3-րդ հոդվածը փոփ. 14.12.01 ՀՕ-279, խմբ. 05.05.05 ՀՕ-87-Ն, փոփ. 25.05.06 ՀՕ-81-Ն, 26.12.08 ՀՕ-254-Ն, խմբ. 07.10.10 ՀՕ-127-Ն, փոփ. 28.11.11 ՀՕ-279-Ն)

Հոդված 4. Հաշվառումը

1. Հանրապետությունում ծխախոտի արտադրանքի իրացումն ազատվում է ավելացված արժեքի հարկից:

2. Վճարողները՝

ա) ծխախոտի արտադրանքի ներմուծման, արտադրության և իրացման մասով վարում են առանձնացված հաշվապահական հաշվառում.

բ) գործունեության այդ մասով հաշվարկում և վճարում են օրենսդրությամբ սահմանված այլ հարկեր, ինչպես նաև գործունեության այլ տեսակների համար՝ օրենսդրությամբ սահմանված հարկերն ու պարտադիր այլ վճարները.

գ) սույն օրենքի 3 հոդվածի 1-ին կետի համաձայն հաշվարկված հաստատագրված վճարներից հաշվանցում են վճարողների կողմից հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի արտադրության գծով ապրանքների և ծառայությունների գնումների դիմաց ստացված՝ այլ մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները.

դ) սույն օրենքով հարկման ենթակա գործունեության մասով ազատվում են իրենց գրանցման վայրի հարկային մարմիններին ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի հաշվարկներ ներկայացնելու պարտավորությունից:

3. Վճարողների համար ծխախոտի արտադրանքի ներմուծման, արտադրության և իրացման մասով կասեցվում են մաքսատուրքի և (կամ) ավելացված արժեքի հարկի ու ակցիզային հարկի գծով օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները:

4. Վճարողները, ինչպես նաև սույն օրենքի համաձայն վճարող չհամարվող՝ հանրապետության տարածքում ծխախոտի արտադրանք իրացնող անձինք Հայաստանի Հանրապետություն ներմուծված և հանրապետությունում արտադրված ծխախոտի արտադրանքի իրացման գծով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում ավելացված արժեքի հարկի դրույքաչափի և գումարի նշում չեն կատարում: Հարկի գումարի առանձնացման դեպքում պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկը հաշվարկվում և վճարվում է սահմանված ընդհանուր կարգով՝ անկախ հաստատագրված վճարների վճարումից:

5. Սույն օրենքի համաձայն վճարող չհամարվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ծխախոտի արտադրանք իրացնող անձինք դրա իրացման գծով ապրանքների (շրջանառության ծախքերին վերաբերող նյութական ռեսուրսների, վառելիքի, աշխատանքների և ծառայությունների) դիմաց վճարված ավելացված արժեքի հարկի գումարները միացնում են ապրանքների ձեռքբերման արժեքին (շրջանառության ծախքերին)՝ իրացման ընդհանուր շրջանառության մեջ ծխախոտի արտադրանքի իրացման շրջանառության տեսակարար կշռին համապատասխանող չափով:

Հոդված 5. Հաստատագրված վճարի վճարումը

1. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը վճարվում է ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը վճարվում է ամսվա արդյունքներով՝ մինչև հաջորդ ամսվա 25-ը: Վճարողներն այդ ժամկետում իրենց գրանցման վայրի հարկային մարմին են ներկայացնում հաստատագրված վճարի հաշվարկ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության սահմանած ձևով:

3. (3-րդ մասն ուժը կորցրել է 05.05.05 ՀՕ-87-Ն)

(5-րդ հոդվածը փոփ. 05.05.05 ՀՕ-87-Ն)

Հոդված 6. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական-նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական-նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ:

Հոդված 7. Օրենքի խախտումների համար պատասխանատվությունը

Սույն օրենքի խախտումներն առաջացնում են պատասխանատվություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 8. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2000 թվականի ապրիլի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ

Ռ. Քոչարյան

Երևան
31 մարտի 2000 թ.
ՀՕ-40